

ԳԵՊԻ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 3

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ
ԱՌԱԶԱՐԿՆԵՐ**

- Գ -

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՄՈՆՈԲԷԱԼ
1999

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ
ԱՌԱԶԱՐԿՆԵՐ**

- Գ -

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՄՈՆՈՐԷԱԿ
1999

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1997-ի նախօրեակին, Նախագահ Լևոն ՏԷՐ-Պետրոսեանը ամանորեան իր ճառին մէջ կը ճշէր թէ Հայաստանը 1997-ին պէտք է դիմագրաւէ երկու գլխաւոր մարտահրաւերներ՝

ա.- վերջ դնել Թուրքիոյ և Ատրպէյճանի կողմէ պարտադրուած շրջափակման,

բ.- դիմադրաձեւ Լեռնային Ղարաբաղի կապակցութեամբ միաջգգային ճնշումներուն:

Այս յառաջադրանքները իրագործելու իբրև միջոց Լևոն ՏԷՐ-Պետրոսեանը կը մատնանշէր երկու նախապայման.- Հայաստանի կայունութիւնը, և ժողովուրդին միաբանութիւնը: Այնուհետև, նախագահը կը նախատեսէր տնտեսական վերաշխուժացում և կենսամակարդակի բարելաւում 1997 տարուան համար:

Ի՞նչ կը հետևի այս տեղեկատուութեան: Այն՝ որ Հայաստանը պիտի հակազդէ (react) շրջափակման և պիտի հակազդէ միջազգային ճնշման: Խօսք չկայ կանխազդելու (proaction) մասին:

Մենք ի՞նչ պիտի ուզէինք լսած ըլլալ Հայաստանի Նախագահէն կամ իր տնտեսական գծով ներկայացուցիչէն:

• • •

Գիտենք թէ առաջին հինգ տարիները մեր նորաստեղծ հանրապետութեան՝ եղան հակազդեցութեամբ գործելու տարիներ: Որպէսզի կառավարութիւնը այսուհետև չզբաղի միայն տագնապներ տնօրինելով (crisis management), հարկ է սահմանել այն մարզերը, որոնց մէջ կառավարութիւնը ի վիճակի պիտի ըլլար կանխազդելու:

Նման բան մը նա՛խ պիտի առաջնորդէր մշակումին՝

ա.- Ազգային Վերակերտումի Ծրագրի մը.

բ.- Ազգային Կրթական Ծրագրի մը.

գ.- Ազգային Տնտեսական Ծրագրի մը.

յիշեալներուն առընթեր որդեգրելով համահայկական չափանիշով մեթոտ մը, որպէսզի մշակուած ծրագրերը գործադրուին տեղական և սփիւռքեան ուժերով՝ համագործակցաբար:

Այլ խօսքով, 1997-ին մեր ժողովուրդին դիմագրաւելիք գլխաւոր մարտահրաւերը հետևեալը պիտի ըլլար.-

«Ութը միլիոն» հայութիւն կարողութիւնը ունի՞ մշակելու ծրագ-

րեր և անոնց իրագործման նպատակով յառաջացնելու գործակցություն՝ որպէսզի հալոց հացին թթխմորը շնորհածուի դուրսէն և անկիւնաքարը դրուի հայ տնտեսական ինքնաբաւութեան:¹

• • •

Ներկայ ուսումնասիրութիւնը պատրաստած ենք Մալխասեան Հիմնարկութեան համար 1986 թուականին:

Անոր հիմնական կմախքը այժմէական մնալով հանդերձ, հարկը կը զգանք հակիրճ ակնարկ մը նետելու Հայաստանի Հանրապետութեան հոշակումէն հինգ տարի առաջ և հինգ տարի ետք մեր տնտեսական կեանքին մէջ արձանագրուած հետաքրքրաշարժ երևոյթներուն վրայ:

Մօտէն դիտող մը պիտի նշմարէ, առաջին առիթով, թէ հակառակ ազատ շուկայական դրութեան բերումով նոր մարզերու և կարելիութիւններու առկայութեան (առևտուր, դրամատուններ, հողի սեփականութիւն), Հայաստանի տնտեսութիւնը աւանդական բոլոր մարզերուն մէջ արձանագրած է սարսափելի ընկրկում մը: Ինչո՞ւ:

Թողունք որ պատմաբանը ուսումնասիրէ անցեալը, իսկ քաղաքագէտը յանձն առնէ ներկան բացատրելու տաղտուկը: Հարցին մօտենանք ապագան կերտողի աչքերով, առարկայօրէն վերլուծելու համար տնտեսութեան հարցը: Ինչպիսի՞ ապագայ պէտք է կերտենք մեր ազգային տնտեսութեան համար:

Եւ որպէսզի Հայ Ազգային Վերակերտումի Առաջարկներու գծով 1986-ին սկսած այս գործը մեր և ընթերցողին միջև ստեղծէ հասարակաց մտածումի գետին մը, անհրաժեշտ է որ նշենք թէ հե-

1 Ահաւասիկ պերճախօս նկարագրական մը Հայաստանի տնտեսութեան արտառոց վիճակին մասին: Մոնթրէալի The Gazette օրաթերթին թղթակիցը Շօ Ֆիօրիթօ, 1996-ի Դեկտեմբեր 28-30-ին, յօդուածաշարքով մը կը ներկայացնէ Ղարաբաղի նախագահական ընտրութիւններու շրջանին իր Հայաստան և Ղարաբաղ այցը: Ենթագլուխ մը նուիրուած է հացագործ Վալերի Ծատուրեանի մը՝ Loaves Leavered with Turkish Yeast խորագրով: Թղթակիցը կը պատմէ. «Գետինը կային փաթեթներ՝ իրաքանչիւրը դրոշմուած որպէս թրքական արտադրութիւն: Թթխմորը բերուած է Իրանէն և առաքուած հիւսիս՝ շրջանցելով շրջափակումը»: Թղթակիցը զարմանքով կը հարցնէ. «Հայկական հացին մէջ թրքական թթխմոր»: Հայ փոսպանը կը պատասխանէ. «Պէտք է ուտենք»: (The Gazette, 28 Դեկտ. 1996):

Անմիջապէս ճշդենք թէ կարևոր չէ ո՞ր երկրէն թթխմորին ներածուած ըլլալը. կարևորը ա՛յն է՝ թէ հանապազօրեայ հացին համար թթխմորը ներածե՛լ է պէտք: Ի՞նչպէս պիտի հասնինք տնտեսական ինքնաբաւութեան՝ առանց ծրագրի և համապատասխան քաղաքականութեան մը, որ քաջալերէ տեղական արտադրութիւնները: Եւ դե՛ռ՝ ի՛նչպէս կ'ըլլայ որ հայ գործարար մը, այր թէ կին, չէ գտնուած այս պակասը դարմանելու համար: Ազգային չափանիշով՝ աններելի թերացում:

տագոտությունն առաջին մասին (էջ 1-33) հիմնական նպատակն է ծանօթացնել ընթերցողը ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ կարևորությունն և յստակացնել թե՛ ի՛նչ կը հասկնանք տնտեսությունն ըսելով:

Յաջորդող հատուածը (34-49)՝ մշակուած 1994-1995 թուականներուն, ցոյց պիտի տայ այն ցանկալի մակարդակը, որուն հասած պէտք է ըլլայինք իրերու ներկայ դրութեամբ: Այս հատուածին հիմնական միտք բանին այն է՝ թէ մեր գործունէութեան դաշտը և մեր ապագայ կացութեանը կախեալ է մեր ազգային ծրագիրներէն: Առանց ազգային ծրագրի կեդրոնաձիգ փարոսին (որուն լոյսը չենք տեսած և չի տեսնուիր տակալին)՝ մեր քայլերը պիտի ըլլան խաւարին մէջ նետուած խարխափումներ՝ միշտ խարակներուն զարնուելով խորտակուելու վտանգին ենթակայ, յոստերնիս դնելով ասուպներու պատահական ու կարճատև փայլատակումներուն վրայ: Եթէ մենք խորապէս համոզուած ենք թէ մեր կենսամակարդակը, իբրև ազգ, այսօր կը համապատասխանէ մեր հաւաքական ցանկութիւններուն, տնտեսութեան մասին ըսելիք չի՛ մնար մեզի: Կրնանք մոռնալ ազգային ծրագիր ու ազգային տնտեսությունն: Իսկ եթէ համոզուած ենք որ մեր ազգային տնտեսական վիճակը համապատասխան է պարզապէս «ձեռքէ բերան» աննախանձելի կացութեան (և է՛ ցաւօք), ուրեմն շա՛տ խօսելիք և մասնատրապէս ընելիք ունինք:

Վերջին մասը (էջ 50 և աւելին) փորձ մըն է եզրափակումի՛ն որոշ ցուցմունքներով մէկտեղ: Հո՛ր է որ կը բիրտեղանայ Ազգային Տնտեսութիւնը համայն ազգին մտահոգութիւնն ու գործը դարձնելու գաղափարը: Բոլորս, ազգովի՛ն, ո՛ր ալ գտնուինք, մասնագիտական ի՛նչ մարզի մէջ ալ որ հմտացած ըլլանք, պարտինք մասնակից դառնալ մեր առողջ ապագայի կերտումին՝ այսօրուան մեր աննպաստ պայմանները վերածելով վաղուան մեր յաջողութիւններու կրուաններուն:

Ծրագրուած տնտեսական զարգացում մը, անտարակոյս, օգտակար կրնայ ըլլալ մեր բովանդակ ժողովուրդին հաւաքաբար, և իրաքանչիւր հայ անհատի առանձնապէս:

Զարգացնել մեր տնտեսութիւնը, պահպանել նուաճուած դիրքերը և յարատևօրէն բարելաւել տնտեսութիւնը՝ իրաքանչիւրիս պարտականութիւնն է. բայց հայկական կառավարութիւնը ևս ունի պարտականութիւն մը.՝ ծրագրել այդ բոլորը և մա՛նաւանդ կանխատեսել ու տնօրինել (manage) զանոնք:

Կանխատեսումը կը պահանջէ ծրագրաւորում: Մեր ուսումնասիրութեան մէջ առած ենք 30 տարուան ժամկէտ մը, և մեր հարցադրումներն ու առաջարկները կը միտին 2025 թուականին նախապատրաստութեան՝ իբրև առաջին հանգրուան մեր նորանկախ հանրապետութեան և մեր ժողովուրդին համար:

Ծրագրումի համար սկսվեց առաջին հարցադրումով, որ բանալի նշանակություն ունի.– Ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանի բնակչության թիւը 2025 թուականին (նկատի առնելու է թէ, վիճակագրական ներկայ տուեալներու համաձայն, ամէն երեսուն տարի կը կրկնապատկուի բնակչութիւնը սահմանակից Իրանի և Թուրքիոյ, որոնք 2025-ին հասած պիտի ըլլան 100-ական միլիոնի սահմանին):¹

Ապա շարադրենք միւս հարցադրումները.–

- Ի՞նչ պէտք է ըլլայ Հայաստանի ազգային համախառն արտադրութիւնը (GNP) 2025-ին.

- Ի՞նչ պէտք է ըլլայ անձի մը տարեկան եկամուտը նոյն թուականին.

- Ի՞նչ մարզերու վրայ պէտք է կեդրոնացուի տնտեսական զարգացումի ծրագիրը, ևլն.:

Ընթերցողը կրնայ հարց տալ թէ Ինչո՞ւ Մալխասեան մը կամ Մալխասեաններ ունին այս մտահոգութիւնները՝ երբ կայ պետութիւն ու նախարարութիւն, որոնց գործն է ծրագրաւորել:

Բացատրենք: Հիմա որ թեւակոխած ենք անկախութեան երկրորդ հնգամեակը, համոզուած ենք թէ յաջորդող հինգ տարիները ճակատագրական նշանակութիւն պիտի ունենան մեր ժողովուրդին համար, որովհետև մեր այս հանգրուանի դիրքորոշումներուն հիման վրայ պիտի որոշուի թէ սերունդ մը ետք, այսինքն՝ 2025 թուականին, հայութիւնը ինքզինք պիտի գտնէ 10 միլիոն հայաստանաբնակներով ազգային պատկառելի հանրապետութեան մը դէմ-յանդիման, թէ՞ 3.5 միլիոննոց բնակչութեամբ ողորմելի միջասահմանային (պոֆերային) ճորտի մը:

Օրէ օր կը սաստկանայ մեր անձկութիւնը քաղաքական, տնտեսական, հոգեկան և բարոյական մեր կացութեան ի տես, մանաւանդ երբ նկատի կ'առնենք թէ համաշխարհայնացումի (globalization) մրրիկին դէմ-յանդիման մենք մեզ տակաւին չենք պաշտպանած համահայկական իրատես ծրագրով մը:

Հիմա ընթերցողին հարցումին հարցումով մը պատասխանենք.– Ի՞նչ են մեր ընտրութիւնները, մեր թիրախները, և հայ անհատին ու ազգին ճակատագիրը հակակշռելու մեր միջոցները:

Պատասխանը.– Հայ Ազգային Ծրագիր մը իր զանազան ենթաբաժանումներով, որոնց շարքին՝ Հայ Ազգային Կրթական Ծրագիր և Հայ Ազգային Տնտեսական Քաղաքականութիւն:

Այս հարցերը միայն այս հատորին մէջ չէ՛ որ կ'արծարծուին: Եօշափած ենք զանոնք Հայաստանի պետական ներկայացուցիչներու հետ ևս:

1 Այս մասին տեսնել մեր «Թուաքանակ» հետազօտութիւնը:

1995-ի ամրան, երբ այդ օրերու տնտեսական նախարարին հարց տուինք թե կա՞յ արդեօք մշակուած Հայ Ազգային Տնտեսական Ծրագիր և համապատասխան քաղաքականություն, համարեա վիրաւորուած պատասխանեց. «Ի՞նչ ծրագիր. հայուն գործ տուէք որ աշխատի»: Այլ խօսքով՝ բանեցուցէք խորհրդային շրջանին ստեղծուած արդիւնաբերական ցանցը և վե՛րջ...:

Բայց բոլորիս ծանօթ է թէ նման բան մը նախկին խորհրդային ո՛չ մէկ հանրապետութեան մէջ իրագործելի է:

Արդեօ՞ք հասած ենք պահու մը, ուր միականի մը անգամ չունինք՝ կոյրերու թագաւորութեան մէջ զինք թագաւոր կարգելու համար...:

Եթէ կ'ուզենք իրա՛պէս բան մը բարեփոխել՝ պարտինք ըլլալ նոր-անսովոր-գործնական: Մոռնա՛նք հինը նորին հետ պատշաճեցնելը, որովհետև մեր հարցերուն լուծում չի բերուիր այդպիսով: Նոր աշխարհ մը նո՛ր մօտեցումներ կը պահանջէ: Փորձենք գտնել թէ ո՞ր եմ մեր մրցակցական առաւելութիւնները (competitive advantages) մեր անմիջական միջավայրին և ընդհանրապէս աշխարհի մէջ:

Կը յուսանք որ Հայաստանի մէջ պետական պատասխանատուներ ընթերցեն այս գիրքը և հաւանին այս կարևոր նիւթին շուրջ հրաւիրել խորհրդակցածողով մը (think tank)՝ հայրենաբնակներու կողքին ունենալով «ներքին» և «արտաքին» սփիւռքներու ներկայացուցիչներ ևս, որպէսզի ջանան արմատական փոփոխութիւններ բերելու նպաստել հայ կեանքէն ներս:¹

1 Էվրեքա՛: Մամուլէն տեղեկացանք թէ Հայաստանի իշխանութիւնները պիտի հրաւիրեն երկու նիստեր՝ ուսումնասիրելու Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու հարցը: Առաջինին իբրև մասնակից պիտի հրաւիրուին միայն հայրենաբնակներ. մինչ երկրորդին մասնակցութիւն պիտի բերեն նաև սփիւռքահայեր: Յապաղած այս նախաձեռնութիւնը գնահատելի է. ժամ է որ իրարմէ բոլորովին տարբեր մտապատկերներ ունեցող հայաստանաբնակներ և սփիւռքահայեր ճանչնան զիրար, և զիրար ճանչնալով գործեն միասին: Բայց որո՞նք և ի՞նչ միջավայրերէ պիտի հրաւիրուին. ո՞վ պիտի ներկայացնէ զանոնք իրարու. ո՞վ պիտի համադրէ ժողովին արդիւնքները, և ի՞նչ նպատակի պիտի ծառայեցնէ զանոնք:

Մոնթրէալի մէջ հաւաքի մը ատարտին, Ակադեմիկոս Աբել Աղանբեկեանը առիթով մը զինք շրջապատող ոռու խօսակիցներուն հետ իր տաք գրոյցը ընդհատելով և բոլորին հասկնալի ըլլալու բացայայտ ճիգով՝ անգլերէնով յայտարարեց. «Ատոնք բոլորը Պետական Անվտանգութեան Գրասենեակի (K.G.B.) մարդիկ էին և են: Ինչպէս անցեալին, հիմա ևս իրենց պաշտօնն է տեղեկագրել իրենց լսածն ու տեսածը: տարբերութիւնն այն է՝ որ անցեալին գիտէին ՈՐՈՒ ուղարկել իրենց տեղեկագիրը, մինչ այսօր այդ բանը չե՛ն գիտեր»:

Նույնպես, կը յուսանք որ Հայ Ազգային Վերակերտումի Առաջարկներու գծով Ազգային Տնտեսութեան զարգացման և վերակերտումին յատկացուած այս հետազոտութիւնը ծառայէ իբրև բնատիպը համահայկական սերտ գործակցութեան մը իրականացումին՝ միշտ նոյն մարզին մէջ:

Հասնելու համար հոն, նա՛խ հարկ է ընդունիլ՝ թէ կա՛յ ազգային տնտեսութիւն, թէ ազգային տնտեսութիւնը ազգի՛ն գործն է, և թէ ժողովուրդ ու կառավարութիւն պարտին միասի՛ն գործել՝ ստանալու համար ամբողջական արդիւնք: Այլ խօսքով, հարկ է պատրաստել հասարակաց մտածումի գետին մը՝ հասարակաց շանքերով հասնիլ փորձելու նախասահմանեալ թիրախներու:

Սկսիճք «վերակերտում» բառով: Վերակերտում՝ կը նշանակէ յաւերժ շարժման մէջ գտնուող փոփոխման վիճակ: Այսինքն՝ որդեգրել նոր ձևեր, որոնք տարբեր են արդէն իսկ կիրարկուողներէն և երբեմն նոյնիսկ հակադիր անոնց: Այսինքն՝ ամէն ինչի նայիլ քննական ակնոցով. ամէն բան կարելի է բարելաւել՝ առանց խտիրի ու բացառութեան: Այսինքն՝ պատրաստ ըլլալ բաց միտքով հրաժարելու մեզի ընտանի սովորութիւններէ և որդեգրելու հակադիր ուղիներ: Եւ այս կէտը կարևոր է, որովհետև հասարակաց նկարագրի վերածուած է մեր ժողովուրդին համար՝ «լուել, աղմուկ չհանել, սիրտ չնեղել, բոլորին հետ միշտ լաւ ըլլալ»: Ասոր եթէ բարդենք, հայաստանաբնակներու պարագային մանաւանդ, համայնավարութեան օրերէն մնացած աւանդ մը՝ որ քուէարկելը պարտաորութիւն կը նկատէր և քննադատել կամ առաջնորդ փոխելը՝ յանցանք, առաւել ևս պարզ կը դառնայ պատկերը:

Մէ՛կ խօսքով, «վերակերտում» բառով պէտք է հասկնանք՝ առնել որևէ վիճակ, ուսումնասիրել զայն, վերամշակել, բարելաւել և մի՛շտ ու մի՛շտ պատշաճեցնել մեր ներկայի ազգային կարիքներուն և շահերուն՝ **փայլուն ապագայ մը ապահովելու ի խնդիր:**

Հետևաբար, անհրաժեշտ կը դառնայ դասակարգել աշխարհաբնակ մեր ազգակիցները, որոնց թիւը Հայաստանի թէ ներքին ու արտաքին սփիւռքներու մէջ կ'ըստի թէ կը հասնի 8 միլիոնի:

Տնտեսական վերակազմութեան պահանջքներու դիտանկիւնով կը տեսնենք երեք խումբ.–

Մաղթենք որ այս անգամ սխալ դուրս գայ յաճախ իր ճշգրտութիւնը ապացուցած ֆրանսական առածը. «Ռոքա՛ն փոխուի՛ այնքա՛ն նո՛յնը կը մնայ»:

Մենք տեղեկատուութեան փոխարէն պիտի փափաքինք գիտնալ թէ ի՞նչ պիտի ըլլայ այդ ժողովներուն ներգործութիւնը մեր տնտեսական հաշուեկշիռին վրայ: Ի՞նչ պիտի ըլլայ վերջնագոյն արդիւնքը (bottom line):

1- Վերակերտումին մասնակցիլ ուզողներ (ուզողներ)։

2- Վերակերտումին մասնակցիլ չուզողներ (չուզողներ)։

3- Վերակերտումի մասին սորվիլ ուզողներ (սորվողներ)։

Այս խումբերէն առաջինը կը կարօտի քաջալերանքի և վստահելի առաջնորդի մը։ Յստակ ծրագիրներ կը դիւրացնեն գործը անհամեմատօրէն։ Այս խումբը կը կազմէ 5 տոկոսը 8 միլիոնին։

Երկրորդ խումբը լուրջ և յարատև աշխատանքէ բացի կը կարօտի խանդավառ և ներշնչող առաջնորդի, որպէսզի դրան սեմին գտնուող ոտքը բերէ դուռէն ներս. այլապէս՝ այս խումբը, որ կը կազմէ 25 տոկոսը 8 միլիոնին, ընդմիջտ պիտի մնայ դուռէն դուրս՝ կորուստ մեր ազգային տնտեսութեան տեսանկիւնով։


Երրորդ խումբը՝ 70 տոկոսը 8 միլիոնին, կը բաժնուի երկու թւերու.՝ 69 տոկոս ներկայացնող մեծամասնութիւնը՝ որ կը կարօտի լուրջ տեղեկատուութեամբ վերադաստիարակուելու՝ եթէ կ'ուզենք զայն օգտակար գործօցի վերածել, և 1 տոկոս կազմող «փոքր ածու»՝ կատարող դիւանակալութիւնը (bureaucracy), որ երկոյթներ շրջելու գործնական ուժը ի ձեռին կեդրոնացուցած ըլլալով՝ ամենավտանգատոր խաւը կը ներկայացնէ։ Մեր չար բախտէն՝ դիւանակալներու ներկայ սերունդը չէ՛ դաստիարակուած Հայ Ազգային Հոգի կոփող օճախներու մէջ և չէ՛ մարզուած Հայ Ազգային Ծրագրի մը հիմամբ մտածելու։ Այս դիւանակալները կը կարծեն գիտնալ, բայց իրենց համար իսկ յստակ չէ թէ ի՞նչ ուղղութեամբ և ի՞նչ ձևով պիտի կատարեն իրենց գործը։

Այս վերջին՝ դիւանակալներու խումբը ինք իր մէջ կը բաժնուի երկու ենթախումբի.՝

ա.՝ մնայուն թւը, որ ներկայ դրութեամբ կ'աշխատի նուազագոյն ամսավճարով, ունի՝ նուիրումի ոգի, բայց դժգոհ է իր վիճակէն և ամսական տասը տոլարով ի վիճակի չէ ասպրեցնելու ընտանիք։ Ասոնք ասպարեզով (career) դիւանակալներ են և կը կազմեն շուրջ 0.9 տոկոսը 8 միլիոնին։

բ.՝ Ընտրովի կամ նշանակովի թւը, որուն գործունէութիւնը կախեալ է կատարութեան գլուխը գտնուող կուսակցութեան դիրքէն։ Ասոնք ասուպի նման կը փայլին՝ առանց մնայուն հետք ձգելու, բացի այն պարագայէն՝ երբ իրենց շարժածիրին (trajectory) վրայ գտնուիք և ուղղակի բաղխում (impact) պատահելով՝ փոսեր (craters) տարածուին հոս ու հոն։ Այս «նոմենքլաթորա»ն 0.1 տոկոսը կը կազմէ 8 միլիոնին։

Մինչև հոս ըստածներուն և Մոնթրէալի գաղութին տուեալներուն վրայ հիմնուելով՝ փորձենք արտայայտուիլ զծանկարով մը.՝



Ծանոթ.-

1- Նկատի առնուած է 8 միլիոն հայութիւն.

2- իւրաքանչիւր գծիկ կը համապատասխանէ մէկ միլիոնի.

3- Ստոյգ տեղեկութիւն չկայ. տուեալները արդիւնք են մեր արժևորումիւն:

Մեր տնտեսական բուրգը ունի հինգ տոկոսանի խարիսխ մը, որ գործնապէս արտադրող է. մէկ տոկոսանի գագաթ մը, որ կոչուած է գործնապէս աշխատանքը տնօրինելու. 94 տոկոսանի օդային զանգուած մը, որուն կոչումը անորոշ է:

Գէթ ա՛յս է պատկերը՝ սփիւռքէն դիտելով: Հաւանաբար նոյն-պիսի կամ մօտիկ պատկեր մը պիտի պարզուի Հայաստանէն դիտելու պարագային՝ տրուած ըլլալով որ մէկ կողմէ ստուերային տնտեսութիւնը (shadow economy) շատ զօրատր է, իսկ միւս կողմէ մեծամասնութեան մասնակցական կարողականութիւնը (potential) շատ տկար է՝ միջոցներու անբաւարարութեան բերումով:

Հետևաբար, շատ չենք սխալիր՝ վերի համեմատութիւններէն մեկնելով եզրակացութիւններու յանգելու ժամանակ:

Առնե՛նք, օրինակ, Մոնթրէալի հայ գաղութը և զայն միջին հաշուով նկատենք 35,000: Գաղութը Պալուճա-Ստեփանակերտ ջրատարին շինութեան ծախսը ստանձնած ըլլալով՝ Հայաստան Համահայկական Հիմնադրամին անուան տակ երեք տարիներու

ընթացքին հանգանակած է 360,000 ամերիկեան տոլար և ուղարկած՝ Հայաստան:

Պարզ վիճակագրական մօտեցումով՝ 35,000-նոց գաղութը իր մասնակցությունը բերած է անձ գլուխ նուիրելով 10 տոլար: Իրականությունը աչքի առաջ ունենալով, սակայն, ի յայտ կու գայ թե գաղութին 2.57 տոկոսը միայն, այսինքն՝ 900 անձեր գոյացուցած են յիշեալ գումարը, մինչ 34,100 անձ մնացած է ձեռնպահ (տուեալը առնուած է Հ.Հ.Հ.-ի գրասենեակէն):

Հարցը հետևեալն է.- Ի՞նչպէս ակնարկուած 900 անձերուն մօտ հետաքրքրությունը վառ պահել, և ի՞նչ եղանակով 34,100 ձեռնպահներուն մօտ հետաքրքրություն արթնցնել, որպէսզի դառնան գործօն մասնակիցներ Հայ Ազգային Տնտեսութեան վերակերտումի ճիգին:

Երբ 1996-ի Դեկտեմբերի տուեալներով նայինք ազատ շուկային ու գործի աշխարհին, հոն կը տեսնենք 12 մոնթրէալահայեր միայն՝ Հայաստանի կապակցութեամբ դրամական ներդրումներու, գործարքներու մասնակցելու, հաշի տալ և ստանալու մարզին մէջ: Այս մէկը՝ վատահաբար, որովհետև այդ անձերէն եօթը Մալխասեան Ընտանիքի Խորհուրդին անդամ են, իսկ մնացեալ հինգը՝ Խորհուրդին անմիջական բարեկամներ: Այլ խօսքով՝ գաղութին 0.03 տոկոսը:

Այս թիւէն բացի կան տասը անձեր, որոնք Էջմիածնի միջոցով կ'օգնեն եկեղեցիին, վանքերու նորոգութեան, և այլն: Այլ խօսքով՝ 0.02 տոկոսը գաղութին:

• • •

Մինչև այս կէտը, մենք յաջողեցանք երկու քայլ առնել միասնաբար.-

1- Ընկալել «վերակերտում» բառը նոյն բովանդակութեամբ.

2- Ծանշնալ գործակիցներու դասակարգումը, դիմագիծն ու թուաքանակը:

Հիմա մեզի կը մնայ գիտնալ փորձել թե ի՞նչ բան կրնայ վերակերտումի աշխատանքին մասնակցիլ փափաքողներու մօտ հետաքրքրությունը պահել արծարծ, և դեռ նոր հետաքրքրողներ ձեռք բերել: Եւ ընելո՛ւ համար այդ՝ նա՛խ զրոյցի նստինք մեր ազգային տնտեսութեան կարիքներուն մասին, կեդրոնաճալով ա՛յն ոլորտներուն վրայ, որոնք կը բացակային գրադարաններու կամ համալսարաններու մէջ, նո՛յնիսկ Ինթըրնէթ-ի ցանցին վրայ վխտացող տնտեսագիտական դասագիրքերու և գրականութեան մէջ: Այսինքն՝ խօսինք մեր զո՛ւտ ազգային շահին և ազգային պահանջքներուն վերաբերող տնտեսական երևոյթներու մասին:

Կասկած չկայ թե որևէ դասագիրքի մէջ, այսօր, պիտի չկարենանք պատասխաններ գտնել մեր հետևեալ հարցումներուն.-

- Ի՞նչ է Հայ Ազգային Տնտեսական Քաղաքականությունը.
- Ի՞նչ է Հայ Ազգային Տնտեսական Ծրագիրը.
- Ի՞նչպէս հասնելու ենք Հայ Ազգային Տնտեսական Ինքնաբարության:

Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատարի մը հետ 12 Յունուար 1997-ին Ուոթըրթաունի մէջ կը կատարուէր այսպիսի հարցազրոյց մը:

Հարցում.- Ի՞նչ են ձեր առաջնահերթ խնդիրները:

Պատասխան.- *Ռամկավարութի՛ն, ռամկավարութի՛ն, և տնտեսութեան զօրացո՛ւմ:*

Հետևութիւն.- Տնտեսական ինքնաբարութիւն, քաղաքականութիւն և ծրագիր տակաւին օդակախ բաներ են:

Հարց տանք մենք մեզի՞ թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ հինգ տոկոսէն վար կը մնայ թիւը Հ.Հ.Հ.-ին մասնակցութիւն բերողներուն. ի՞նչպէս կ'ըլլայ որ գոյութիւն չունի մասնակցութիւն բերելու զօրաւոր պահանջք. ի՞նչպէս կ'ըլլայ որ մասնակցութեան այլևայլ ձևեր ու ոճեր ծանօթ չեն մեզի. ի՞նչպէս կ'ըլլայ որ մնայուն և վճարունակ գործեր հայթայթող ազատ շուկան կը մնայ անտեսուած վիճակի մէջ:

Փորձենք, դա՛րձեալ, պատասխաններ գտնել նոյն պաշտոնատարէն, իր վերոյիշեալ հարցազրոյցի ընթացքին:

Հարցում.- Սփիւռքը ինչո՞վ կրնայ օգտակար ըլլալ Հայաստանի:

Պատասխան.- *Թո՛ղ Սփիւռքը ըսէ թէ ի՞նչ կրնայ ընել Հայաստանի համար:*

Սփիւռքին ըսելիքը տեսա՛նք.-

0.03 տոկոս շուկայական ներդրումի մասնակից

0.02 տոկոս եկեղեցասէր

2.57 տոկոս Հ.Հ.Հ.-ի դրամահաւաքին մասնակից:

• • •

1945-ին, Համաշխարհային Բ. Պատերազմի աւարտին, Եւրոպան քարուքանդ էր ռազմական գործողութիւններու հետևանքով: Այդ առեւն George C. Mrshall-ը ներկայացուց ծրագիր մը, որ հոշակաւոր պիտի դառնար իբրև Marshall Plan կամ European Recovery Pogram (Եւրոպայի վերականգնումի Ծրագիր):

Եւրոպան տրամադրեց իր լաւագոյն մարդուժն ու կազմակերպչական կարողութիւնները, իսկ ԱՄՆ-ը յատկացուց հսկայ գումարներ, և ընդամենը քսանամեակի մը ընթացքին Եւրոպան վերականգնեցաւ ու այսօր հաւաքաբար կը ներկայացնէ աշխարհի ամենախոշոր տնտեսութիւնը: Դա՛ւր.- **Այդ բոլորը կատարուեցաւ ծրագրի մը շնորհիւ:**

Հայաստանը, այսօր, առեւի՛ր քարուքանդ վիճակի մէջ է՝ քան Երրորդ տարեկան էր 1945-ին: Երկրաշարժ, պատերազմ, գաղթականներ, 70 տարուայ համայնավարութիւն, տնտեսական կառուցներու և եւթակառուցներու անբարարարութիւն, նոր կառուցներ ղեկավարողներու անբարարարութիւն, մա՛նաւանդ մշակոյթի տարբերութիւն (մշակոյթը, որ ունինք, և մշակոյթը, որ պիտի ուզէինք ունենալ՝ ովկիանոսի մը վրայ նետուելիք կամուրջով մը մերձեցնալու պէտք ունին...): Իրատես ըլլալով՝ Հայաստանն իր ամբողջութեամբ աղէտի գօտիէ մը (disaster area) տարբեր պատկեր չի պարզեր:

Կասկած չկայ թէ իւրաքանչիւր սրտցաւ հայորդի կ'ուզէ մասնակից ըլլալ մեր ժողովուրդի ամբողջական վերակերտումի աշխատանքին. բայց քայլ նետելէ առաջ՝ հարկ է ճշդել թէ զարգացման ո՞ր սանդխամատին վրայ կը գտնուինք այսօր, և ո՞ր սանդխամատին վրայ կ'ուզենք գտնուիլ յաջորդ քառամեակին կամ երեսնամեակին: Այլապէս՝ բոլորովին անգործնական պիտի ըլլայ խօսիլ միջոցներու և գործեալներու մասին:

Կրկին կու գանք ծրագիր մը ունենալու անհրաժեշտութեան, և մ'եր ծրագիրը, մեր «Մարշըլ Փլան»ը ունենալու կենսականութեան: ԾՐԱԳԻՐ, ԾՐԱԳԻՐ, ԾՐԱԳԻՐ:

Իսկ ծրագիր կը նշանակէ՝ շարունակականութիւն նպատակի, մտածումի, գործի և նոյնիսկ երագի:

• • •

Ի՞նչ ցոյց կու տան անցնող հինգ տարիները:

Ծիշդ հակառակը.-- Անշարունակականութիւն, ՀԱԿԱՇարունակականութիւն:

Երեք, եթէ ո՛չ առեւի, տնտեսական ու կրթական նախարար փոխուած է անցնող երեք տարիներուն: Նախարարներ՝ որոնց կատարածը անբարարար, անգորհացուցիչ և ապարդիւն կարելի է միայն որակել: Տարբեր չէր կրնար ըլլալ թերևս, քանի որ մեր մօտէ՛ն ճանչցած նախարարներուն մօտ չէինք գտած մեր ժողովուրդին ներկայ և ապագայ կարիքներուն համապատասխան պատրաստութիւն ու տեսիլք:

Կա՛մ զիրենք պաշտօնի կոչող մարմինը սխալ արժևորած է նախարարներուն կարողութիւնը. կա՛մ այդ հրաւիրող մարմինը ի՛նք չէ գիտցած ի՞նչ ակնկալել նախարարներէն և ի՞նչպէս. և կա՛մ քուլիսային քաղաքականութիւն մը իր առաջնադաս ազդեցութիւնն ունեցած է նախարարներու նշանակումին վրայ:

Մեր համեստ կարծիքով՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահն ու իր անմիջական շրջապատի մարդիկ, հակառակ քանի մը տարիներու կարճ ժամանակամիջոցի ընթացքին իրենց ձեռք բերած փորձառութեան, կը մնան քաղաքականութեան ուսանողներ:

Մտաբերենք ուսական առած մը, որ կը հաստատէ. «Խելօքը ուրիշներու սխալներէն կը սորվի. իսկ անխելքը ինք ի՛ր սխալներէն», և անմիջապէս աւելցնենք.–

Քանի որ մեզի համար սխալիլը մահացու կրնայ ըլլալ, քանի որ չե՛նք կրնար սխալելու պերճանքը ունենալ, անչտաճգելիօրէն պարտինք պահանջել ծրագի՛ր և համապատասխան արդի՛նք, պարտինք ունենա՛լ ծրագիր և համապատասխան արդիւնք:

Միջո՞ցը այս մէկն ունենալու.– Մեր կացութեան քաջածանօթ արհեստավարժ (professional) մասնագէտներ:

• • •

Մեր ժողովուրդի վերակերտումի աշխատանքներուն մասնակցիլ ուզողներուն մօտ հետաքրքրութիւնը արծարծ պահելու և անոնց շարքին նորեր աւելցնելու գլխաւոր միջոցը մենք կը գտնենք դաստիարակութեա՛ն մէջ:

Հինգերորդ դարուն մեր ժողովուրդի վերակերտումի կարիքը ծնունդ տուաւ Վոսմշապուհի մը, Սահակ Պարթևի մը և Մեսրոպ Մաշտոցի մը: Պատմութիւնը այսօր մեզ քերած է նման կարիքի մը դէմ–յանդիման, և մեր ժամանակներու ամենազարգացած երկիրներուն հետ քայլ պահելու համար քսանմէկերորդ դարուն՝ պէտքը ունինք նոր երրորդութեան մը: Ահաւասիկ այդ երրորդութիւնը՝ անուններու պարզ փոփոխութեամբ.–

Վոսմշապուհ արքայ – նախագահ

Սահակ Պարթև – տնտեսութեան նախարար

Մեսրոպ Մաշտոց – կրթութեան նախարար

Մատնանշած եղանք գլխաւոր երեք պատասխանատուները Ազգային Ծրագիրի գործադրութեան:

Նախագահ՛ի՛ր՝ պատասխանատու բնակչութեան թուաքանակին.

Տնտեսութեան նախարա՛ր՛ը՝ պատասխանատու կեանքի որակին.

Կրթութեան նախարա՛ր՛ը՝ պատասխանատու մշակոյթի որակին:

Անուրանալի է որ մեր հայրենիքին և մեր ժողովուրդին ապագան կախեալ են այս երեքին գործունէութենէն: Եւ անուրանալի է որ կրթութի՛ւնն է հիմքը հիմքերուն:

Մեր գոյապահպանումը ապահովող և մեզ մշակութային–քաղաքակրթական նոր մակարդակի բարձրացնող հիմնական աշխատանքը կատարուեցաւ Մաշտոցին հիմնած դպրոցին շնորհիւ:

Մենք, մեր կարգին, այսօր պիտի պահանջենք և ՕԳՆԵՆՔ որ կրթութեան նախարարութեան հովանաւորութեամբ Հայաստանի Համալսարանին մէջ հիմնուի մնայուն աթոռ մը, որուն կրթական ծրագիրն ըլլայ ԱՐՄԷՆԻԶՄԸ (տե՛ս մեր ԿՐԹՈՒԹԻՒՆ հատորը):

Մեր բաղձանքն է որ այդ աթոռէն շրջանաւարտ ըլլայ այնպիսի ընտրանի մը, որ հի՛նն ու նորը խորապէս ուսումնասիրած



ըլլալով մէկտեղ՝ հասանական ապագայի կերտումը դարձնէ իր գլխաւոր թիրախը:

Մեր բաղձանքն է որ աշխարհական թէ եկեղեցական բարձրագոյն պաշտօններ գրաւելու համար ենթականեր անցած ըլլան համապատասխան պատրաստութեան մը բովէն և ունենան՝

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍԻԼՔ ՈՒ ԹՈՒԻՉՔ:

Եւ գործը միացնելով խօսքին ու բաղձանքին՝ պատրաստակամութիւնը կը յայտնենք հիմնելու վերոնշեալ աթոռը՝ կողքի էջով տրուող պատկերացումով:



ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ



Ա. ԿԱՐԳ

Բ. ԿԱՐԳ

Գ. ԿԱՐԳ



1 Մանրամասնությունները տեսնել մեր «Կրթություն» հատորին մէջ:

I- ՍԱՀՄԱՆՈՒԹ ԵՒ ԲԱՑՄԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ (Economy)

1.- «Երկրի մը՝ իր նիւթական, դրամական և մարդկային ուժի աղբիւրները օգտագործելու դրութիւնը. այդ աղբիւրներուն կազմակերպումը».

2.- «Իր նիւթական թէ այլ տրամադրելի միջոցներէն առանձնազոյն արդիւնքը ստանալու կերպերուն համադրութիւնը»:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Economics)

1.- «Հարստութեան արտադրումը վարող օրէնքներուն գիտական ուսումնասիրութիւնը».

2.- «Գիտութիւնը, որ կը զբաղի հարստութեան արտադրումով, բաշխումով և սպառումով»:

ՀԱՄԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Macroeconomics)

Տնտեսագիտութեան մէկ ճիւղն է, որ կը զբաղի տնտեսութեան մը խոշոր և ընդհանուր երևոյթներով, ինչպիսիք է, օրինակ, փոխարաբերութիւնը ընդմէջ ամբողջ երկրի մը եկամուտին և շահարկումներուն:

ՄԱՆՐԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Microeconomics)

Տնտեսագիտութեան այն ճիւղն է, որ կը զբաղի տնտեսութեան մը վրայ ներգործութիւն ունեցող մասնաշատուկ ազդակներով, ինչպէս, օրինակ, փոխարաբերութիւնը ընդմէջ սպրանքներու արժեքին և վաճառումի գինին. կամ՝ անհատ գնորդներու մօտեցումի ձևը սպրանքներու նկատմամբ. կամ՝ շուկայադրումը (marketing) որոշ սպրանքներու:

II- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԻ ԾԻՐԵՐ (ԳԱՐԱՇՐՁԱՆՆԵՐ)

Տնտեսության զարգացումը կրճատվում է բաժնելու ուժը գլխավոր ծիրերու, որոնք են.–

- ա.– Որսորդական.
- բ.– Խաշնարածային.
- գ.– Հողատնտեսական.
- դ.– Արդիւնաբերական (ճարտարարտեսական – industrial).
- ե.– Տեղեկութային-հաղորդակցական (communication).
- զ.– Կենսաբանական (biological).
- է.– Հոգեբանական (psychological).
- ը.– Արհեստական խելքի (artificial intelligence):

Հայերս ալ, ուրիշ ճիւղ ժողովուրդներու նման, անցած ենք տնտեսական կեանքի առաջին երեք շրջաններէն. բայց կանգ առած ենք չորրորդին՝ Արդիւնաբերականին վրայ, զոր կերտելու աշխատանքը յառաջ կը տարուի Հայաստանի մէջ:

Ասիկա դժբախտութիւն մըն է, որովհետեւ աշխարհի արդիականացած երկիրները՝ ԱՄՆ, Ճաբոն ու երրօրական երկիրներ, արդէն մուտք գործելու վրայ են յաջորդ՝ Յետ-Արդիւնաբերական (post-industrial) փուլէն ներս, որ է՝ Տեղեկութային-հաղորդակցական տնտեսութիւնը:

Եթէ այս թափով շարունակուի այդ զարգացած երկիրներու յառաջընթացը, անոնք կրճատվուին շուտով թեւակոխել յաջորդ երեք շրջաններէն ներս ալ, որոնք են՝

- Կենսաբանական տնտեսութեան ընկերութիւնը.
- Հոգեբանականը.
- Արհեստական խելքի տնտեսութիւնը:

III- ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԿՈՐ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Առանց այս կամ այն մտածումի հոսանքին տառացիորեն հետևելով՝ փորձենք Տնտեսությունը բաժնել գլխաւոր մասերու և ենթամասերու, որպէսզի աւելի դիւրին ըլլայ տեսնել ընդհանուր պատկերը: Գործածած ենք քանատական տնտեսութեան տուեալները՝ նկատի ունենալով որ Քանատայի տնտեսությունը բազմաճիւղ է, և կ'ընդգրկէ գրեթէ ամբողջությունը կարելի մարզերուն:

Ա.- Առաջնադաս (primary)- 14.6 առ հարիւր

- Հողագործութիւն և ձկնորսութիւն
- Անտառաբուծութիւն և ատաղձեղէն
- Բուսախիւս (pulp), թուղթ, տպագրութիւն
- Քարիւղ, կազ, հանքածուխ
- Հանքագործութիւն-հանածոներ
- Ոչ-մետաղային քիմիագործութիւն
- Պողպատ և մետաղագործութիւն

Բ.- Երկրորդական արդիւնագործումներ (manufacturing)- 13.1 առ հարիւր

- Ուտեստեղէն և խմիչքներ
- Հիւսուածեղէններ և զգեստներ
- Շարժակառքեր (motor vehicles)
- Ելեքտրական արտադրանքներ
- Քիմիանիւթեր և զտարաններ

Գ.- Ծինանիւթեր-շինութիւններ - 6.2 առ հարիւր

Դ.- Պիտանելիքներ (utilities) - 3.2 առ հարիւր

Ենթագումար՝ (ապրանք արտադրող արդիւնաբերութիւններու)՝ 37.1 առ հարիւր

Ե.- Սպասարկութիւններ (ծառայութիւններ - services) - 62.9 առ հարիւր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ՝ 100 առ հարիւր

Պատկերը գրեթէ նոյնն է բոլոր ճարտարարուեստական երկիրներուն մէջ:

Այս բաժանումները ցույց կու տան խոշոր կարևորությունը **սպասարկություններու** մարզին, և հասանալկան ուղղությունը տնտեսություններու ապագայ զարգացումին: